Преосвященные архипастыри, всечестные пресвитеры и диаконы, боголюбивые иноки и инокини, дорогие братья и сёстры!

Воздавая хвалу в Троице славимому Богу и разделяя со всеми вами радость нынешнего торжества, обращаюсь к вам, православным чадам нашей Церкви, проживающим как в России, так и в других странах пастырской ответственности Московского Патриархата, и сердечно поздравляю с праздником Рождества Христова – праздником воплощённой любви Творца к Своему творению, праздником исполнения обетования о пришествии на землю Сына Божия, праздником надежды на спасение и вечную жизнь.

***В**елие и преславное чудо совершися днесь: Дева раждает и утроба не истлевает: Слово воплощается и Отца не отлучается. Ангели с пастырьми славят, и мы с ними вопием: слава в вышних Богу, и на земли мир* (стихира праздника). Такими словами Церковь Христова свидетельствует о таинственном событии, которое произошло более двух тысячелетий назад в Вифлеемской пещере и изменило весь дальнейший ход мировой истории. С изумлением и благоговением мы преклоняем колена наших сердец перед этой непостижимой человеческим разумом тайной Божественного замысла о спасении. С благодарением принимая сей жертвенный дар Творца и Промыслителя, тако о нас изволившего, мы *исповедуем благодать, проповедуем милость, не таим благодеяний* (молитва великой агиасмы).

Что же нам, христианам XXI века, надлежит делать, чтобы стать причастниками этого поистине бесценного благодеяния Божия и удостоиться Его Царства, *уготованного от создания мира* (Мф. 25, 34)?

Всё, что мы можем и должны сделать в своей жизни, – ответить на Его любовь взаимностью. А это значит, верить и всецело доверять Богу, исполнять евангельские заповеди, *уклоняться*

от зла и творить добро (Пс. 33, 15), быть, по призыву Спасителя, *светом миру и солью земли* (Мф. 5, 13–14).

Будучи наделённым свободной волей и неотъемлемым правом выбора, любой человек может либо принять Христа, либо отвергнуть Его, быть на стороне света – или погрузиться во тьму греха, жить по совести – или *по стихиям мира сего* (Кол. 2, 8), посредством добрых дел созидать в сердце своем рай – или, напротив, творя зло, уже здесь на земле испытывать адские муки. Другими словами, каждый из нас призван к радости и полноте жизни, говоря простым языком, к счастью, а оно – это важно сознавать и понимать – невозможно без Бога, ибо Он – источник жизни и всех благ, Он – Творец и Промыслитель, Он – любящий Отец, наш заботливый Помощник и Покровитель. Обладая свободной волей, человек может избрать жизнь и достичь богоуподобления, но он также свободен и в выборе для себя другой, безбожной и безблагодатной жизни, ведущей к погибели.

Вот почему Господь, Который создал нас, всё же не спасает нас без нашего участия. В сопряжении *воли Божией, благой и совершенной* (Рим. 12, 2), с волей человеческой, пусть несовершенной, но стремящейся к добру, – залог нашего успешного прохождения земного поприща. В конечном итоге, вечная участь каждого человека является продолжением того духовного состояния, которое было свойственно ему в земной жизни.

Памятуя об этом, будем, по слову апостола Павла, стремиться стяжать в себе *любовь, радость, мир, долготерпение, благость, милосердие, веру, кротость, воздержание* (Гал. 5, 22–23) и другие дары Духа. Будем делать всё возможное, чтобы оставаться нам христианами не только по имени, но и по образу жизни, по отношению к родным и близким, к соработникам и сослуживцам, к каждому человеку, нуждающемуся в нашей помощи и участии, сочувствии и поддержке.

Во все дни, наипаче же в сей великий праздник, мы призваны усердно молиться *о мире всего мира и благостоянии святых Божиих Церквей, о недугующих, страждущих, плененных и о спасении их.*

Значимость этих прошений ныне весьма актуальна, ибо силы зла, брани и разделений хотящие, ополчились на Православие. Они сеют вражду и ненависть, используют любые средства для воплощения своих коварных замыслов. Но мы верим и надеемся, что силой Божией все *немощные дерзости* демонов и их приспешников будут посрамлены. Так было не раз в прошлом, так будет и сейчас. Многовековой опыт Церкви убеждает нас в этом.

Особую благодарность выражаю всем, кто, совершая ныне пастырское служение в пределах Украины, порой с риском для жизни и здоровья продолжает хранить верность каноническому Православию, кто безбоязненно идёт по пути исповедничества, претерпевает поношения и скорби за Христа и за Церковь. Таковым мужественным защитникам и поборникам Истины да поможет Господь в испытаниях и да вменит страдания их в праведность.

Несмотря ни на что, духовно мы едины. Мы едины, ибо вышли из единой крещальной купели. Мы едины, ибо совокупно являем полноту Единой, Святой Соборной и Апостольской Церкви. Мы едины, ибо связаны неразрывными узами любви во Христе. Мы едины, ибо непреложны слова Спасителя, сказавшего: *«Я с вами во все дни до скончания века»* (Мф. 28, 20). Посему нам, христианам, некого и нечего бояться, о чём и напоминает апостол Павел, восклицая: *«Если Бог за нас, кто против нас?»* (Рим. 8, 31). Вдохновляясь этим обетованием, мы живём и созидаем, боремся и побеждаем именем Господним, ибо, как пишет святой апостол Петр, *«нет другого имени под небом, данного человекам, которым надлежало бы нам спастись»* (Деян. 4, 12). Не было, нет и не будет, – свидетельствует Церковь.

Со времени пришествия на землю Господа и доныне всем верующим в Него дарована возможность быть чадами Отца Небесного, ибо, как утверждает святой апостол Павел, теперь мы *свои, а не чужие Богу* (Еф. 2, 19). И это означает, что все мы – Его дети, а в Нём и через Него – родные и близкие друг другу.

В богослужениях и священнодействиях Церкви, которая является местом встречи человека со своим Создателем, нам

приоткрывается завеса вечности и уже здесь, на земле, даётся предвкушение грядущей полноты бытия, когда, по слову Священного Писания, *будет Бог всяческая во всех* (1 Кор. 15, 28), когда никто и ничто *не сможет отлучить нас от любви Божией* (Рим. 8, 39), от радости общения с Ним, когда *отрёт Бог всякую слезу с очей человеческих, и смерти не будет уже, ибо прежнее прошло* (Откр. 21, 4).

Возвещая людям благую весть о пришествии в мир Спасителя, Церковь, как чадолюбивая мать, всех призывает уверовать во Христа и жить по Его завету, дабы стать наследниками вечного блаженства. Поистине Господь пришел на землю, чтобы нас возвести на небо. Он неизменно предлагает людям следовать путём духовно-нравственного преображения, которое достигается исполнением евангельских заповедей, добровольным соработничеством человека и Бога, содействием Его благодати, ниспосылаемой в Таинствах Церкви.

И если во взаимоотношениях с людьми, в повседневных делах и заботах мы научимся руководствоваться Божественными установлениями, то многое изменится не только в нас, но и вокруг нас: жизнь обретёт подлинный смысл, наполнится настоящей радостью и счастьем.

Будем же достойны христианского звания и призвания. Будем идти по жизненному пути с твёрдой верой и непоколебимой надеждой на помощь свыше, радуясь каждому новому дню и новой возможности творить добрые дела, любя ближних и *благодаря Бога всегда и за всё* (Еф. 5, 20), Ему же подобает всякая слава, честь и поклонение во веки веков. Аминь.

С праздником всех вас, мои дорогие, с Рождеством Христовым!

+ Кирилл

ПАТРИАРХ МОСКОВСКИЙ И ВСЕЯ РУСИ

Рождество Христово
2024/2025 года
г. Москва

ՍՈՒՐԲԾՆՆԴՅԱՆ ՈՒՂԵՐՁ
Մոսկվայի և համայն Ռուսիո ԿԻՐԻԼ Պատրիարքի Ռուս Ուղղափառ Եկեղեցու հովվապետներին, հովիվներին, վանականներին և հավատավոր բոլոր զավակներին

Սրբազան հովվապետներ, արժանապատիվ երեցներ և սարկավագներ, աստվածասեր վանականներ և միանձնուհիներ, թանկագի՛ն եղբայրներ և քույրեր,

Գովաբանություն մատուցելով Երրորդության մեջ փառավորվող Աստծուն և կիսելով բոլորիդ հետ այս տոնակատարության ուրախությունը՝ դիմում եմ ձեզ՝ մեր Եկեղեցու ուղղափառ զավակներիդ, որ բնակվում եք ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Մոսկվայի Պատրիարքության հովվական պատասխանատվության այլ երկրներում: Սրտանց շնորհավորում եմ ձեզ Քրիստոսի Սուրբ Ծննդյան տոնի առթիվ՝ Իր արարչության հանդեպ Արարչի մարմնավորված սիրո, Աստծո Որդու դեպի երկիր գալստյան խոստման կատարման և փրկության ու հավիտենական կյանքի հույսի տոնի առթիվ:

Այսօր մեծ և փառավորագույն հրաշք է կատարվել.Կույսը ծնում է և արգանդը չի ապականվում, Բանը մարմնանում է և Հորից չի անջատվում: Հրեշտակները փառաբանում են հովիվների հետ, և մենք նրանց հետ միասին գոչում ենք. փառք Աստծուն բարձունքներում, և խաղաղություն երկրի վրա (ստիքերոն տոնական): Այս խոսքերով Քրիստոսի Եկեղեցին վկայում է մի խորհրդավոր իրադարձության մասին, որը տեղի է ունեցել ավելի քան երկու հազար տարի առաջ Բեթղեհեմի քարայրում և փոխել համաշխարհային պատմության հետագա ողջ ընթացքը: Մենք զմայլանքով և երկյուղածությամբ մեր սրտերը խոնարհում ենք փրկության Աստվածային ծրագրի, մարդկային մտքի համար անըմբռնելի այս խորհրդի առջև: Գոհությամբ ընդունելով Արարչի և Նախախնամողի այս զոհաբերական պարգևը, մեզ համար այդպես

կամեցողի, *մենք խոստովանում ենք շնորհը, քարոզում ենք ողորմություն և չենք թաքցնում բարեգործությունները* (Մեծ ջրօրհնեքի աղոթք):

Ի՞նչ պետք է անենք մենք՝ 21-րդ դարի քրիստոնյաներս, որպեսզի մասնակից դառնանք Աստծո այս իսկապես անգին բարեգործությանը և արժանի լինենք Նրա Արքայությանը, որը *պատրաստված է աշխարհի սկզբից* (Մատթեոս 25. 34):

Այն ամենը, ինչ մենք կարող ենք և պետք է անենք մեր կյանքում՝ պատասխանել Նրա սիրուն փոխադարձությամբ: Իսկ դա նշանակում է. հավատալ և լիովին վստահել Աստծուն, կատարել ավետարանական պատվիրանները, *խուսափել չարից և բարին գործել* (Սաղմ. 33:15), լինել, ըստ Փրկչի կանչի, *աշխարհի լույսն ու երկրի աղը* (Մատթ. 5:13–14):

Օժտված լինելով ազատ կամքով և ընտրության անքակտելի իրավունքով՝ ցանկացած մարդ կարող է կա՛մ ընդունել Քրիստոսին, կա՛մ մերժել Նրան, լինել լույսի կողքին, կամ ընկղմվել մեղքի խավարի մեջ, ապրել խղճի համաձայն, կամ ըստ *այս աշխարհի տարրերի* (Կող. 2:8), բարի գործերի միջոցով կերտել դրախտ մեր սրտում, կամ, ընդհակառակը, չար գործելով, արդեն այստեղ երկրի վրա կրել դժոխքի տանջանքները: Այլ կերպ ասած, մեզանից յուրաքանչյուրը կոչված է ուրախ և լիարժեք կյանքի, պարզ բառերով ասած՝ երջանկության, և կարևոր է գիտակցել և հասկանալ, որ դա անհնար է առանց Աստծո, քանի որ Նա է կյանքի և բոլոր բարիքների աղբյուրը, Նա Արարիչն է ու Նախախնամողը, Նա սիրող Հայր է, մեր հոգատար Օգնականն ու Հովանավորը: Ունենալով ազատ կամք՝ մարդը կարող է ընտրել կյանքն ու հասնել Աստծո նմանության, բայց ազատ է նաև իր համար ընտրել մեկ այլ՝ դեպի կործանում տանող անաստված ու անշնորհական կյանքը:

Ահա թե ինչու Տերը, Ով ստեղծել է մեզ, այդուհանդերձ, չի փրկում մեզ առանց մեր մասնակցության: *Աստծո բարի և կատարյալ կամքի* (Հռոմ. 12:2) զուգակցումը մարդու կամքի հետ, թեկուզ անկատար, բայց դեպի բարին ձգտող, մեր երկրային ընթացքի հաջող անցման գրավականն է: Ի վերջո, յուրաքանչյուր մարդու հավիտենական վիճակը՝ նրա երկրային կյանքին բնորոշ հոգևոր վիճակի շարունակությունն է:

Հիշելով այդ՝ եկեք, ըստ Պողոս առաքյալի խոսքի, ձգտենք մեր մեջ ձեռք բերել *սեր, ուրախություն, խաղաղություն, երկայնամտություն, բարություն, ողորմություն, հավատք, հեզություն, ժուժկալություն* (Գաղ. 5, 22–23) և Հոգու այլ շնորհներ: Անե՛նք ամեն հնարավորը՝ քրիստոնյա մնալու համար ոչ միայն անունով, այլև ապրելակերպով, մեր վերաբերմունքով հարազատների և մերձավորների, գործընկերների և ծառայակիցների, յուրաքանչյուր մարդու հանդեպ, ով ունի մեր օգնության և մասնակցության, կարեկցանքի և աջակցության կարիքը:

Ամեն օր, հատկապես այս մեծ տոնին, մենք կոչված ենք ջերմեռանդորեն աղոթելու *համայն աշխարհի խաղաղության և Աստծո սուրբ Եկեղեցիների հաստատության, հիվանդների, տառապյալների, գերիների և նրանց փրկության համար:* Այս խնդրվածքերի կարևորությունն այժմ շատ հրատապ է, քանի որ պատերազմ և պառակտումներ ցանկացող չար ուժերը զինվել են Ուղղափառության դեմ: Նրանք թշնամություն ու ատելություն են սերմանում ու ամեն միջոց օգտագործում են իրենց նենգ մտադրություններն իրականացնելու համար: Սակայն մենք հավատում ենք և հուսով ենք, որ Աստծո զորությամբ դևերի և նրանց կամակատարների բոլոր տկար հանդգնությունները ամոթահար են լինելու: Ինչպես բազմիցս եղել է անցյալում, այդպես էլ կլինի հիմա: Եկեղեցու բազմադարյա փորձը մեզ համոզում է դրանում:

Հատուկ երախտագիտություն եմ հայտնում բոլորին, ովքեր այժմ հովվական ծառայություն կատարելով Ուկրաինայում, երբեմն վտանգի ենթարկելով կյանքը և առողջությունը, շարունակում են հավատարիմ մնալ կանոնական Ուղղափառությանը, ով անվախ գնում է խոստովանողության ճանապարհով, նախատինք ու վիշտ է կրում Քրիստոսի և Եկեղեցու համար: Թող Տերն օգնի այդպիսի քաջարի պաշտպաններին և Ճշմարտության ջատագովներին փորձությունների ժամանակ և նրանց տառապանքը համարի որպես արդարություն:

Անկախ ամեն ինչից՝ մենք հոգեպես միասնական ենք: Մենք միասնական ենք, քանի որ դուրս ենք եկել մկրտության մեկ ավազանից: Մենք միասնական ենք, քանի որ միասին ցույց ենք տալիս Մեկ, Սուրբ Ընդհանրական և Առաքելական Եկեղեցու լիությունը: Մենք միասնական ենք, քանի որ կապված ենք Քրիստոսի սիրո անխզելի կապերով: Մենք միասնական ենք, քանի որ անփոփոխելի են Փրկչի խոսքերը. *«Ես ձեզ հետ եմ բոլոր օրերում, մինչև աշխարհի վախճանը»* (Մատթեոս 28, 20): Հետևաբար, մենք՝ քրիստոնյաներս, ոչ մեկից և ոչնչից վախենալու բան չունենք, ինչպես մեզ հիշեցնում է Պողոս առաքյալը, երբ բացականչում է. *«Եթե Աստված մեր կողմն է, ո՞վ կարող է մեր դեմ լինել»:* (Հռոմ. 8:31): Այս խոստումով ոգեշնչված՝ մենք ապրում և արարում ենք, պայքարում և հաղթում ենք Տիրոջ անունով, քանզի, ինչպես ասում է սուրբ Պետրոս առաքյալը, *«Երկնքի տակ մարդկանց տրված ուրիշ անուն չկա, որով մենք պետք է փրկվենք»* (Գործք 4, 12): Չկար, չկա և չի լինի, – վկայում է Եկեղեցին:

Այն պահից, երբ Տերը եկավ երկիր մինչ այժմ, բոլոր նրանց, ովքեր հավատում են Նրան, հնարավորություն է տրված՝ լինել Երկնավոր Հոր զավակներ, քանի որ, ինչպես սուրբ Պողոս Առաքյալն է հաստատում, *այժմ մենք օտար չենք, այլ ընտանի Աստծուն* (Եփես. 2:19): Իսկ դա

նշանակում է, որ մենք բոլորս Նրա զավակներն ենք, և Նրա մեջ և Նրա միջոցով մենք հարազատ և մտերիմ ենք միմյանց նկատմամբ:

Եկեղեցու պաշտամունքումներում և սրբազան արարողություններում, որտեղ մարդը հանդիպում է իր Արարչին, մեզ համար մի փոքր բացվում է հավիտենության վարագույրը և արդեն այստեղ՝ երկրի վրա, մեզ տրվում է գալիք գոյության լիության նախաճաշակումը, երբ, ըստ Սուրբ Գրքի խոսքի, *Աստված կլինի ամենը բոլորի մեջ* (1 Կորնթ. 15, 28), երբ ոչ ոք և ոչինչ չի կարող *մեզ բաժանել Աստծո սիրուց* (Հռոմ. 8:39), Նրա հետ հաղորդակցվելու ուրախությունից, *երբ Աստված մարդկանց աչքերից կարբի ամեն արտասուք, և մահն այլևս չի լինի, քանզի այդ ամենն անցնելու է* (Հայտն. 21:4):

Փոկչի աշխարհ գալու ավետիսն ազդարարելով մարդկանց՝ Եկեղեցին, իբրև որդեսեր մայր, կոչ է անում բոլորին հավատալ Քրիստոսին և ապրել Նրա պատգամներով՝ դառնալու համար հավիտենական երանության ժառանգորդներ: Իրոք. Տերը եկավ երկիր՝ մեզ երկինք տանելու: Նա անփոփոխ կերպով առաջարկում է մարդկանց գնալ հոգևոր և բարոյական փոխակերպության ճանապարհով, ինչը ձեռք է բերվում Ավետարանի պատվիրանների կատարմամբ, մարդու և Աստծո կամավոր համագործակցությամբ և Եկեղեցու Խորհուրդներով ներառաքվող Նրա շնորհի գործակցությամբ:

Եվ եթե մարդկանց հետ փոխհարաբերություններում, առօրյա գործերում և հոգսերում սովորենք առաջնորդվել Աստվածային կարգադրություններով, ապա շատ բան կփոխվի ոչ միայն մեր մեջ, այլ նաև մեր շուրջը. կյանքը ձեռք կբերի իսկական իմաստ, կլցվի իրական ուրախությամբ և երջանկությամբ:

Արժանի լինենք քրիստոնեական կոչմանը: Եկեք քայլենք կյանքի ճանապարհով ամուր հավատքով և ի վերուստ օգնության անսասան հույսով, ուրախանալով ամեն նոր օրվա և բարի գործեր կատարելու նոր հնարավորության համար, սիրելով մեր մերձավորներին և գոհություն հայտնելով Աստծուն *միշտ և ամեն ինչի համար* (Եփես. 5:20). և Նրան վայել է ամեն փառք, պատիվ ու երկրպագություն՝ հավիտյանս հավիտենից: Ամեն.

Ծնորհավոր բոլորիդ տոնը, սիրելինե՛րս, շնորհավոր Սուրբ Ծնունդ:

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ

Սուրբ Ծնունդ
2024/2025 թթ
Ք. Մոսկվա